

---

---

**ՎՐԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**  
**ԵՊՀ-ՈՒՄ. ԵՐԵՎ, ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ**

Հայ և վրաց ժողովուրդների գրական-մշակութային և պատմագիտական սերտ առնչությունները խոր արմատներ ունեն, սկիզբ են առել գրերի ու դպրության ծննդյան օրվանից և փոխանցվել նոր սերունդներին՝ ապահովելով բարեկամության ու համագործակցության ուսանելի ավանդույթներ և շարունակական ընթացք: Այդ կապերը ավելի խորացան, յուրահատուկ բնույթ ստացան Վրաստանում և Հայաստանում ազգային համալսարանների հիմնադրումից հետո: 1918 թ. հունվարի 26-ին Թբիլիսիում հիմնադրված պետական համալսարանը (ԹՊՀ) Կովկասում առաջինն էր, որտեղ դասավանդվող առարկաների ցանկում տեղ են գտել նաև հայագիտական առարկաներ, ինչպիսիք են՝ հայոց լեզուն, Հայաստանի պատմությունը և հայ հին պատմական գրականությունը: Վրացական մայր բուհում գործել են հայագիտության ամբիոնը (1922 թ. ի վեր), Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի պատմության ամբիոնը (1933-1935 թթ.), որի ծրագրերում ևս ներառվել են հայագիտական առարկաներ, իսկ 1945 թվականից՝ հայոց լեզվի և գրականության բաժինը (այժմ՝ հայագիտական ուղղություն):

Ակնհայտ է, որ ԹՊՀ-ում հայագիտությունը ի սկզբանե եղել է գիտական ուսումնասիրության առանձին բնագավառ և քննարկվել վրացագիտության հետ սերտ կապերի հոլովույթում: Գործընթացի սկզբից ի վեր ԹՊՀ-ն հոգեհարազատ է եղել վիրահայ հանրությանը ոչ միայն նշված հանգամանքների, այլև հայ երիտասարդությանը բարձրագույն կրթություն ստանալու անվերապահ իրավունք ընձեռելու հնարավորության շնորհիվ: Նշենք նաև, որ ԹՊՀ-ն Հայաստանից դուրս գտնվող միակ կրթական օջախն էր, որտեղ գործում էր հայագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ: Հայագիտության բնագավառի առաջին ատենախոսությունը, ի դեպ՝ դոկտորական, պաշտպանվել է հենց այդ խորհրդում (1928 թ. նոյեմբերի 4-ին):

ԹՊՀ-ում գիտության տարբեր բնագավառներում ասպիրանտական ուսումնառություն են ստացել Հայաստանի բուհերի, մասնավորապես ԵՊՀ-ի բազում շրջանավարտներ, որոնք այնտեղ ստացել են թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան:

ԵՊՀ-ում վրացագիտությունը սկզբնավորվել է 1966 թվականից, երբ հայ ժողովուրդը համաշխարհային հանրության հետ առանձնակի շուքով նշում էր վրաց խոշորագույն բանաստեղծ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակը: Այդ օրերին Երևանի և Թբիլիսիի համալսարանների միջև կնքվեց համագոր-

ծակցության պայմանագիր, որի շրջանակներում ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում Հայաստանի և Վրաստանի գիտության վաստակավոր գործիչ Գուրգեն Սևակի ղեկավարությամբ հիմնադրվեց Շոթա Ռուսթավելու անվան ուսումնական կաբինետ (1981-2006 թթ. այդ պարտականությունները հասարակական հիմունքներով կատարել է բ.գ.թ., դոցենտ Հրաչիկ Բայրամյանը): Գործողության մեջ դրվեցին կամընտրական դասընթացներ, վրացերենի խմբակներ, նաև ուսանողներ և ասպիրանտներ փոխանակելու ավանդույթ:

Հոբելյանական օրերին հրավիրված գիտական առաջին նստաշրջանում հայ-վրացական բանասիրության հիմնախնդիրներին նվիրված զեկուցումներ կարդացին ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, բանասիրական ֆակուլտետի ղեկան Մկրտիչ Մկրյանը, գրականության տեսության ամբիոնի վարիչ Էդվարդ Ջրբաշյանը, հայոց լեզվի ամբիոնի վարիչ Գուրգեն Սևակը, Թբիլիսիի համալսարանի վրաց բանասիրության ֆակուլտետի ղեկան Ակակի Ուրուշաձեն, վրաց հին լեզվի ամբիոնի վարիչ, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ակակի Շանիձեն, պրոֆեսոր Սոլոմոն Խուցիշվիլին, Իոսեֆ Մեգրելիձեն և այլք:

Կաբինետի աշխատակիցների ակտիվ մասնակցությամբ գիտական նստաշրջաններ հրավիրվեցին նաև Անտուան Մեյեի ծննդյան 100-ամյակի (1966 թ. դեկտեմբեր), բանաստեղծ Նիկոլոզ Բարաթաշվիլու ծննդյան 150-ամյակի (1968 թ. սեպտեմբեր), Ակակի Շանիձեի ծննդյան 80-ամյակի (1968 թ. հոկտեմբեր), Էդուարդ Աղայանի ծննդյան 60-ամյակի (1973 թ. ապրիլ), Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 150-ամյակի (1976 թ. մայիս), Իլիա Ճավճավաձեի ծննդյան 140-ամյակի (1978 թ. մայիս), Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու 150-ամյակի (1978 թ. հոկտեմբեր) և այլ տարեդարձերի ու նշանակալից տարեթվերի առիթով:

Կաբինետի բազայի հիման վրա 1970 թ. կազմավորվեց հետազոտական խումբ, որն ընդգրկվեց հայագիտական կենտրոնի համակարգում: Խումբն ընտրեց հետևյալ ուղղությունները՝ լեզվաբանություն, բառարանագրություն, գրական-մշակութային աղբյուրներ, գեղարվեստական և գիտահանրամատչելի երկերի թարգմանություններ:

Խորհրդային համակարգի կազմալուծումից հետո փորձեր եղան վերանայելու և վերագնահատելու ազգային արժեքները, պատմագիտությունն ու հարաբերությունների պատմականությունը: Հատկապես հայ-վրացական առնչությունների լուսաբանման հարցում ոմանք տուրք տվեցին անհարկի ծայրահեղությունների, կեղծ հայրենասիրությանը՝ անտեսելով ճշմարտությունն ու գիտական անաչառությունը: Օտարվելու շունչ էր զգացվում բարեկամ ժողովուրդների, մշակույթների, համալսարանների, նույնիսկ բարեկամ մարդկանց միջև:

Հայ-վրացական առնչություններում այդ անցանկալի գոյացությունը կանխելը անհրաժեշտություն էր, ուստի առաջին քայլն արվեց 2006 թ. մայիսի կեսերին, երբ ԵՊՀ-ում տեղի ունեցան փոփոխություններ. օրեր անց կազմակերպվեց վրացական պոեզիայի փառատոն՝ մայր բուհի նորընտիր ղեկա-

վարության, հայ բանասիրության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, Հայաստանի և Վրաստանի գրողների միությունների ակտիվ մասնակցությամբ:

2006-2007 ուսումնական տարվանից հայ բանասիրության ֆակուլտետում մտցվեց «Վրացագիտություն մասնագիտացում», որն ուսանողներին հնարավորություն էր ընձեռում ուսումնասիրելու վրաց լեզուն և գրականությունը, Վրաստանի պատմությունն ու մշակույթը:

Հոկտեմբերին հայ բանասիրության ֆակուլտետում անցկացվեց հայ-վրացական գրական-մշակութային առնչություններին նվիրված առաջին գիտական նստաշրջանը: ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Արամ Միմոնյանը գործնական հանդիպում ունեցավ Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռևազ Գաչեչիլաձեի հետ, որին հաջորդեց ԵՊՀ պատվիրակության այցը Բաթումի պետական համալսարան, որտեղ կնքվեց երկու համալսարանների միջև համագործակցության ու բարեկամության պայմանագիր, իսկ սեպտեմբերի 11-ին պրն. Միմոնյանը և ԹՊՀ ռեկտոր Գեորգի Խուբուան ստորագրեցին կրթական, գիտական և մշակութային համագործակցության պայմանագիր:

2007 թ. ԵՊՀ-ում ստեղծվեց վրացագիտության հայկական կենտրոն, որն իր աշխատանքներն սկսեց 2008 թ. սկզբից՝ դառնալով Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ստորաբաժանումներից մեկը:

Վերընձյուղված համագործակցության իրողություն էր Կենտրոնի նախաձեռնությամբ 2008 թ. ապրիլի 8-11-ը ԵՊՀ-ում հրավիրված գիտաժողովը, որը բավականին ընդգրկուն էր (պատմություն, աղբյուրագիտություն, լեզվաբանություն, գրական-մշակութային առնչություններ), և որի աշխատանքներին, հայ վրացագետներից և բանասիրական ֆակուլտետի դասախոսներից բացի, մասնակցեցին և զեկուցումներով հանդես եկան նաև ԹՊՀ հումանիտար ֆակուլտետի դասախոսներ և գիտաշխատողներ:

2010 թ. մայիսի 3-ին ԵՊՀ-ում հյուրընկալվեց Ախալցխայի պետական համալսարանի պատվիրակությունը: Ստորագրվեց համագործակցության ևս մեկ հուշագիր, իսկ հոկտեմբերին ԹՊՀ ռեկտորի պաշտոնակատար Ալեքսանդր Կվիտաշվիլիի և Արամ Միմոնյանի միջև տեղի ունեցավ համընդհանուր խնդիրների երկկողմանի քննարկում:

2012 թ. հոկտեմբերի 6-ին Թբիլիսիում անցկացվեց Մայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված գիտական համատեղ կոնֆերանս, որտեղ զեկուցումներով հանդես եկան ԹՊՀ և ԵՊՀ մի շարք դասախոսներ և գիտաշխատողներ:

Կենտրոնի գոյությունը, քաղաքական, միջպետական, միջբուհական կարևոր իրադարձություն լինելուց բացի, կյանքի է կոչել հայագիտության համար կարևոր մի բնագավառ, որտեղ ժամանակին բեղուն գործունեություն են ծավալել և իրենց անուրանալի ավանդը ներդրել գիտության վաստակաշատ գործիչներ Մարի Բրոսեն, Նիկողայոս Մառը, Յոզեֆ Մարկվարտը,

Քերովբե Պատկանյանը, Լևոն Մելիքսեթ-Բեկը, Իվանե Ջավախիշվիլին, Իյսա Աբուլաձեն, Գուրգեն Սևակը, Սուրեն Երեմյանը և այլք:

Վրացերենի և վրաց գրականության ուսուցման մակարդակը բուռնում բարձրացնելու նպատակով ևս կատարվել է զգալի աշխատանք. ԵՊՀ հրատարակչությունը լույս ընծայեց կենտրոնի ղեկավար, Հր. Բայրամյանի հեղինակած ուսումնական ձեռնարկները<sup>1</sup>, որոնք, ի դեպ, օգտագործվում են նաև Հայաստանի և Վրաստանի հայկական այն դպրոցներում, քոլեջներում ու բարձրագույն հաստատություններում, որտեղ դասավանդվում են վրաց լեզու, վրաց գրականություն և հայ-վրացական բանասիրություն առարկաները:

Առաջնահերթ խնդիրներից են հայ դասականների՝ հայ-վրացական հարաբերություններին նվիրված այն աշխատությունների հրատարակություններն ու վերահրատարակությունները, որոնք խիստ կարևոր են տարածաշրջանում գիտամշակութային որոշակի հիմնահարցերի լուծում տալու համար: Այդ նպատակով Կենտրոնում 2013 թ. հիմնադրվեց «Հայ-վրացական հարաբերություններ» մատենաշարը, որի Ա և Բ գրքերը արդեն լույս են տեսել:

Առաջինը ականավոր կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատության վերահրատարակությունն է մեկ գրքով, որտեղ վրացական աղբյուրներից քաղված բնագրերի թարգմանությունն ուղեկցվում է պատմաբանասիրական, աղբյուրագիտական, մատենագիտական ծանոթագրություններով ու բանիմաց մեկնաբանություններով: Գիրքը տպագրվել է ապակետիպ (սկանավորված) եղանակով:

Բ գրքում զետեղված է երկու գրախոսություն, որոնցից մեկի հեղինակը Նիկողայոս Մառն է, որն ուշիուշով հետազոտում է բանաստեղծ Ակակի Ծերեթելիի «Պատմական քնություն. Արմենիա, Հայաստան, Սոմխեթի հորջորջումներ» աշխատությունը և գիտնականին բնորոշ բանիմացությամբ լուսաբանում պատմության, գրականության, լեզվաբանության, առհասարակ բանասիրության այս կամ այն հարցի վերաբերյալ վրացի բանաստեղծի մոտեցումները և ապացուցում ու հիմնավորում իր տեսակետները:

Երկրորդում պատմաբան, տնտեսագետ, հասարակական գործիչ Քրիստափոր Վերմիշևը (Վերմիշյանց) վերլուծում է «Հայ գիտնականները և քարերի աղաղակը» վրացերեն աշխատության հեղինակի պատմատնտեսագիտական հայացքները, պարզաբանում հիմնահարցերը և վեր հանում այն միտումները, որոնք պատճառ են դարձել կամաձին եզրահանգումների:

Կենտրոնի ղեկավարը հետևում է նաև վրաց ընթացիկ մամուլին և պարբերականներին, որոնց էջերում հաճախակի տպագրվում են հայ-վրացական պատմամշակութային առնչություններին վերաբերող կողմնակալ հոդված-

---

<sup>1</sup> Տե՛ս **Բայրամյան Հր.**, Վրաց գրականությունը V-XIX դդ., զիրք Ա, Երևան, 2007, *նույնի՝* Վրաց լեզու, Երևան, 2010, *նույնի՝* Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից, Երևան, 2010, *նույնի՝* Հայերեն-վրացերեն զրուցարան, Երևան, 2005, II հրատ., 2009: Հր. Բայրամյանի խմբագրությամբ լույս է տեսել «Վրացերեն-հայերեն բառարանը» (Երևան, 2005):

ներ, անձամբ հանդես է գալիս պատասխան հոդվածներով, միաժամանակ դրանք թարգմանում և տրամադրում է համապատասխան մասնագետներին, որպեսզի նրանք ևս կարծիք կազմեն և ծավալեն հակաքարոզչական գործունեություն:

Գեղարվեստական թարգմանությունը միջմշակութային հաղորդակցության և ժողովուրդների մերձեցման կարևորագույն միջոցներից է, ուստի Հր. Բայրամյանն իր ուժերը ներդրել է նաև այդ բնագավառում: Նա միաժամանակ ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների բակալավրիական ու մագիստրոսական կուրսերում դասավանդում է վրացագիտական առարկաներ:

Վստահաբար կարելի է ասել, որ, չնայած իր գոյության կարճատևությանը և համեստ ներուժին, Կենտրոնն արդեն Վրաստանի գիտական և գրական շրջանակներում ձեռք է բերել ճանաչում: Այդ մասին են վկայում կենտրոնի ղեկավարի հեղինակած, թարգմանած և կազմած գրքերի մասին վրացի գործընկերների վրացերեն, անգլերեն, հայերեն գրախոսությունները Թբիլիսիի և Երևանի գիտական հանդեսներում և գրական մամուլի էջերում<sup>1</sup>:

2014 թ. Կենտրոնը վերանվանվեց Հայ-վրացական հարաբերությունների բաժնի, համալրվեց աշխատակիցներով, առաջադրվեցին նոր խնդիրներ և ծրագրեր, համակարգվեցին գիտահետազոտական թեմաները, դրանց իրականացման ուղիներն ու մեթոդները:

*ՀՐԱՅՐ ՍՄԲՍՅԱՆ*

---

<sup>1</sup> Վրացերենից թարգմանել և առանձին գրքերով հրատարակել է Ռևազ Բնանիշվիլու «Լռություն ճանապարհին» պատմվածքների ժողովածուն (Երևան, 1979), Լադո Սրբելաշվիլու «Իդալթոեցի տղաները» (Երևան, 1981), Գուրամ Փանջիկիձեի «Ակնաքար» (Երևան, 1982), Լոդար Դումբաձեի «Հավերժության օրենքը» (Երևան, 1983) վեպերը, վերջինիս «Ընտիր երկերը»՝ երկու հատորով (Երևան, 1987), սպա և պատմվածքների ժողովածուն ու «Կուկարաչա» վիպակը (Երևան, 1990), Իոսեֆ Գրիշաշվիլու՝ «Հին Թիֆլիսի գրական բռնեմը» (Երևան, 1989), «Ուղեցույց աստղը» (Երևան, 1999), «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում» (Երևան, 2001), Ռևազ Միշվելաձեի նովելների ժողովածուն (Երևան, 2005): Կազմել, խմբագրել և ծանոթագրել է «Ձայն բարեկամության» (Երևան, 1977), «Վրացական պոեզիա» (Երևան, 1983), «Հայ գրողները վրաց գրականության մասին» (Երևան, 1986), «Վրաց երկինք» (Երևան, 1990) ժողովածուները: Դրանից բացի՝ վրաց դասական և ժամանակակից գրողների ավելի քան հարյուր երեսուն նովել ու պատմվածք նրա թարգմանությամբ տպագրվել են գրական հանդեսներում, արվանախներում, քրեստոմատիական ժողովածուներում և ամսագրերում: Նրա սցենարով նկարահանվել և հայկական հեռուստատեսությամբ ցուցադրվել են «Իրակլի Աբաշիձե», «Լոդար Դումբաձե» (երկու մասից բաղկացած այս ֆիլմը հեռարձակվել է նաև վրացական հեռուստատեսությամբ), «Մայաթ-Նովա», «Գալակտիոն Տաբիձե», «Գաբրիել Սունդուկյան» (երկու մասից), «Շոթա Ռուսթավելի» ուսումնական և գիտահանրամատչելի ֆիլմերը:

<sup>1</sup> Տե՛ս օրինակ «Մախալխո գանաթլեբա», Թբիլիսի, 1988, 14 հոկտեմբերի, «Մծերլիս գազեթի», Թբիլիսի, 2006, 10-30 հունիսի, «Թբիլիսիս ունիվերսիտետի», 29. X. 2008, «Գումբաթի», թիվ 44, 9-15 նոյեմբերի, 2009, «Լիտերատուրուլի ձիբանի», Թբիլիսի, 2010, XXXI, էջ 324-333 (վրաց.), «The Kartvelologist», թիվ 16 (1), 2011, էջ 203-217 (վրաց.), նույն տեղում՝ էջ 218-229 (անգլ.):